Venice, 14 October 2016
Scuola Grande di San Giovanni Evangelista

# ԵԼՈՒՅԹ

## Վենետիկի հանձնաժողովի 108-րդ լիագումար նիստի համար

Մեծարգո պարոն Նախագահ,

Հանձնաժողովի հարգարժան անդամներ,

Տիկնայք և պարոնայք,

Թույլ տվեք ողջունել բոլորին և իմ գոհունակությունը հայտնել 108-րդ լիագումար նիստին մասնակցելու հրավերի համար:

Այսօր հաստատվելու է Վենետիկի հանձնաժողովի և ԵԱՀԿ/ԺՀՄԻԳ-ի երկրորդ համատեղ նախնական կարծիքը, որը կազմվել է 2016 թվականի հունիս 30-ին ընդունված Ընտրական օրենսգրքի փոփոխությունների հիման վրա:

Այսօրվա իմ խոսքում կփորձեմ ներկայացնել, օրենսգրքի փոփոխություններին հաջորդած որոշ կարևոր զարգացումներ:

Իրականում ես շատ ուրախ եմ, որ հիմա ներկայացնելու եմ մի փորձառություն, որն ըստ իս, վստահության կառուցման և հասարակության համախմբման հաջողված մի պատմություն է և կարող է հավակնել դառնալու օրինակելի մի փորձ:

Այսպես, այս պերճաշուք դահլիճում անցյալ նիստի ժամանակ ես ներկայացրեցի, թե հայկական իշխանություններն ինչպես են Ընտրական օրենսգրքում հաստատագրել Վենետիկի հանձնաժողովի և ԵԱՀԿ/ԺՀՄԻԳ-ի առաջարկությունները:

Ընդհանրապես, ընդդիմության և քաղաքացիական հասարակության ներկայացուցիչների հետ ձեռք բերված ամենակարևոր համաձայնությունը, որը թույլ էր տալիս խոսելու կոնսեսուսի առկայության մասին, մենք համարում էինք տեխնիկական սարքերի կիրառման այս որոշումը, որն ըստ էության, ընտրողի 10 մատով նույնականացման միջոցով գրանցում իրականացնելն էր: Մենք դրա համար աշխատել էինք ՄԱԿ-ի փորձագետների հետ, բնականաբար լսել էինք ոլորտի տարբեր կազմակերպությունների առաջարկություններ և արդյունքում ընդունել էինք Ընտրական օրենսգիրք, որտեղ այդ

նորմերի ուժի մեջ մտնելու ժամկետ էինք սահմանել սեպտեմբերի 1-ը: Եվ դա պայմանավորված էր անհրաժեշտ ֆինանսական միջոցներ ապահովելու հանգամանքով: Այս ամենն արտացոլված է նաև իմ կողմից վկայակոչված երկրորդ նախնական կարծիքի նախագծում:

Այսինքն՝ սեպտեմբերի 1-ի դրությամբ մենք պետք է սկսեինք համապատասխան տեխնիկական սարքավորումների ձեռք բերման գործընթացն այն հաշվարկով, որ այդ համակարգը կարողանանք փորձարկել աշնանը նախատեսված տեղական ինքնակառավարման մարմինների ընտրությունների ժամանակ և ապա կիրառել համապետական ընտրությունների ժամանակ:

Տեխնիկական համակարգի ներդրումը պահանջում էր 16 միլիոն եվրո, որի մի մասը հանձն առավ տրամադրել ՀՀ կառավարությունը: Ֆինանսավորման մյուս մասն ապահովելու նպատակով մենք ներգրավեցինք բոլոր միջազգային գործընկերներին ՝ ԵՄ, ԱՄՆ ՄԶԳ, ՄԱԿ, Մեծ Բրիտանիա, Գերմանիա և այլն: Արդյունքում մեզ հաջողվեց ապահովել պահանջվող ֆինանսավորումը:

Այսինքն՝ մենք ունեինք փոփոխված օրենսգիրք, քաղաքական ու հասարակական կոնսենսուս ու ֆինանսավորում, և բոլորիս համար կարևոր էր շուտ սկսել գործընթացը:

Ցավոք, ի հայտ եկավ մի հանգամանք, որը կախված չէր ոչ ընդդիմության, ոչ իշխանությունների և ոչ էլ քաղաքացիական հասարակության կամքից: Այն մասնագիտացված կազմակերպությունը, որը պետք է մատակարարեր նշված տեխնիկան, պարզեց, որ դա կարող է անել ամենաշուտը դեկտեմբերին: Մենք անգամ շատ կարճ ժամանակում համաձայնություն ձեռք բերեցինք բանակցային ֆորմատով, որ համաձայն ենք անգամ երկու մատով նույնականացում անել, սակայն ապարդյուն, ժամկետները հնարավոր չէր փոխել: Իսկ դա նշանակում էր, որ մենք չէինք հասցնում պատշաճ պատրաստվել համապետական ընտրություններին:

Ստացվեց, որ մենք ունեինք ընդունված Ընտրական օրենսգիրք, դժվար տրված համաձայնություն, անգամ ֆինանսական միջոցներ, սակայն ստիպված էինք չեղարկել մեր համաձայնությունը:

Թվում էր, թե սա կարող էր լինել հաջողված պատմության անհաջող ավարտը, բայց բանակցային ֆորմատն իր մեջ ուժ գտավ երկրորդ անգամ վերադառնալու քննարկման սեղանի շուրջ, որովհետև մեր նպատակը երկրում վստահության մթնոլորտի ձևավորումն էր և իշխանությունն արեց ամեն ինչ պատշաճ ընտրությունների համար հիմքեր ստեղծելու համար:

Սա էր հիմնական խնդիրը, և ես մեծ հպարտությամբ պետք է նշեմ, որ իշխանության մեկնած ձեռքը սեղմեցին այս հարցում թե ընդդիմության և թե քաղաքացիական հասարակության ներկայացուցիչները:

Բանակցային ֆորմատի վերջին աշխատանքի արդյունքը ուղիղ մեկ ամիս առաջ՝ սեպտեմբերի 13-ին, ստրագրված հայտարարությունն է, որը նախատեսում է մի քանի սկզբունքային կետեր: Ամենամեծ շեշտադրումը, որը կուզենայի կատարել դրանցից, արդեն նշածս ստորագրված ցուցակների հրապարակումն է, որը տարիներ շարունակ որպես պահանջ ներկայացվում էր ընդդիմության կողմից:

Ես հեռու եմ այն մտքից, հարգելի հանձնաժողովականներ, որ դուք եք ճիշտ հասցեատերը իմ այն հիմնավորումների, որ այս հարցը խնդրահարույց է մի շարք այլ հանրաճանաչ սկզբունքների լույսի ներքո: Ես չեմ փորձի դա այստեղ հիմնավորել:

Սակայն ինչպես արդեն նշեցի, այդ բոլոր քննարկումների գերնպատակը վստահության մթնոլորտի ձևավորումն էր և երբ վերացավ լրացուցիչ վերահսկողական երաշխիքներ ապահովելու հնարավորությունը (10 մատով ընտրողի նույնականացում անելու, տեխնիկական մյուս միջոցների կիրառումը), մնում էր վերահսկողության այնպիսի երաշխիքի սահմանումը, որը փոխադարձ ընդունելի կլիներ բանակցային երեք կողմերի (իշխանության, ընդդիմության և քաղաքացիական հասարակության) համար: Ուստի, եկանք համաձայնության՝ հրապարակելու քվեարկած ընտրողների ցուցակները, որի վերաբերյալ նախագիծն այս օրերին գտնվում է Ազգային ժողովում:

Հարգելի ներկաներ,

Յուրաքանչյուր փոխհամաձայնություն ունի իր գինը և մեր դեպքում այդ գինը շեղումն էր ստորագրված ցուցակների հրապարակման վերաբերյալ հանրաճանաչ խորհրդատվական առաջարկից:

Սակայն ես վստահ եմ, որ թե մեր քաղաքական ընդդիմությունը, թե մեր հասարակությունը և թե միջազգային մեր գործընկերները՝ Վենետիկի հանձնաժողովը, ԵԱՀԿ/ԺՀՄԻԳ-ը, համոզված են, որ ամբողջ գործընթացում մեզ առաջնորդել է ընտրական գործընթացների շուրջ փոխադարձ վստահության ստեղծման և աննախադեպ պատշաճ ընտրություններ անցկացնելու մեր ամենակարևոր նպատակը: Եվ ցուցակների հրապարակման այս որոշումը ստեղծված իրավիճակում հանրության վստահության ապահովմանն ուղղված կարևոր քայլ է:

Մեծարգո նախագահ,

Հանձնաժողովի հարգելի անդամներ,

Ես այսօր Ձեզ խնդրում եմ հաստատվելիք կարծիքում գնահատել հայկական իշխանությունների, ընդդիմության և քաղաքացիական հասարակության՝ երկրում վստահության մթնոլորտ ստեղծելու և փոխհամաձայնություն կերտելուն ուղղված ջանքերը:

Թույլ տվեք նաև շնորհակալություն հայտնել Վենետիկի հանձնաժողովի մեր բոլոր գործընկերներին, ԵԱՀԿ/ԺՀՄԻԳ-ի փորձագետներին ցուցաբերած մեծ պատրաստակամության և սրտացավությամբ այս ամբողջ ընթացքում մեզ աջակցելու համար:

Շնորհակալություն ուշադրության համար: